ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 267- Ա **26 հոկտեմբերի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 114 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԻՆԱՐ ԳՅՈՒՂԻ ԱՐԾՐՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 801-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 18-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց>> պետական հիմնարկը վերակազմակերպելու և <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 114 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը:
3. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Միհրանուշ Միհրանի Սահակյանին՝ ապահովել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության պետական գրանցումը՝ կազմակերպության միջոցների հաշվին:
4. Սույն որոշման [illegible]արման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:
5. Սույն որոշումն [illegible]տնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ